

ՍԱՂՄՈՍ 19

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Աստծո գործերը և Խոսքը	Տիրոջ կատարյալ Հայտնությունը	Օրհներգ Աստծուն՝ որպես բնության Արարչի և Օրենքը սվողի	Աստծո փառքը Ստեղծագործության մեջ	ՅԱՀՎԵՆ, Փրկող Արդարության Որդին
<u>MT ներածություն</u> Գլխավոր երաժշտին, Դավթի սաղմոսը				
19:1-6	19:1-4բ	19:1-4բ	19:1-6	19:1-2 19:3-5
	19:4գ-6	19:4գ-6		
			Տիրոջ Օրենքը	19:6
19:7-14	19:7-11	19:7-10	19:7-11	19:7 19:8 19:9
		19:11-13		19:11-12
	19:12-13		19:12-13	
				19:13
	19:14	19:14	19:14	19:14

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գրուիք: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ա. Այս Սաղմոսն այն մասին է, թե ինչպես են մարդիկ ճանաչում Աստծուն: Նրանք չեն կարող Նրան գտնել՝ հայտնաբերել: Նա՛ պետք է հայտնի Իրեն և Նա ունի երկու կերպ:
- Բ. Աստծո հայտնությունը պետք է անձնապես ընդունվի և իրագործվի: Դա պարտադիր չէ, որ լինի ինչ-որ կանոնակարգ, այլ Աստծո հետ փոխհարաբերություն:
- Գ. Այս Սաղմոսը մեծ օրհնություն է եղել իմ կյանքում երկու կերպերով՝
1. այն ցույց է տալիս Սուրբ Գրերի հավաստիությունը և թանկարժեքությունը (այսինքն՝ Սաղմ. 19:7-10):
 2. այն հույս և խաղաղություն է տալիս մեղքի դեմ ամենօրյա պայքարների մեջ (այսինքն՝ Սաղմ. 19:11-14):
- Համար 14-ը այն աղոթքներից է, որ հաճախ եմ աղոթում:
- Դ. Համառոտ ուրվագիծը՝
1. Ընդհանուր հայտնություն (Աստված հայտնում է Իրեն բնության մեջ, Սաղմ. 19:1-6, տես՝ Հռոմ. 1:19-20, նաև նկատեք Հռոմ. 2:14-15):
 2. Հատուկ հայտնություն (Աստված հայտնում է Իրեն Իր գործերի միջոցով, տես՝ երկրորդ տողի գուգահեռը), որը արձանագրված է Աստվածաշնչում, սակայն գերազանց կերպով հայտնվեց Իր Որդու միջոցով. Սաղմ. 19:7-11, տես՝ Հովհ. 1:1-14, 14:6,9, 2 Կորնթ. 5:17-21 (տես՝ Սուրբգրային մեկնությունների սեմինարը www.freebiblecommentary.org որը ներառում է ընդհանուր հերմենևտիկական ընթացակարգերի և տարբեր ժանրերի հատուկ ընթացակարգերի մասին տեղեկություններ):
 3. Նվիրման աղոթք, Սաղմ. 19:12-14:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍՍ. ՍԱՂՄՈՍ 19:1-6

¹Երկինքները հայտարարում են Աստծո փառքը,
Ու հաստատությունը Նրա ձեռքերի գործերն է ցույց տալիս:
²Օրը օրին հայտնում է խոսքը,
Ու գիշերը գիշերին գիտություն է ցույց տալիս:
³Չկան խոսքեր ու չկա լեզու, ուր նրանց ձայնը լսելի չէ:
⁴Ամբողջ երկրում լավեց նրանց հնչյունը
Ու մինչև աշխարհի ծայրը՝ նրանց խոսքերը:
Նրանց մեջ արևի համար մի վրան կանգնեցրեց,
⁵Որն իր առագաստից ելած փեսայի է նման,
Հզոր մարդու պես իր ճանապարհը վազելով է ուրախանում:
⁶Նրա ելքը երկնքի մի ծայրից է,
Իսկ նրա շրջանը՝ մինչև նրա մյուս ծագերը.
Եվ նրա ջերմությունից ոչինչ չի կարողանում թաքնվել:

19:1 «Երկինքները հայտարարում են Աստծո փառքը» Սա հայտնի է որպես «բնական հայտնություն»: Հռոմեացիների 1:19-20 արտահայտում է նույն ճշմարտությունը, որ բոլորը կարող են Աստծո մասին ինչ-որ բան իմանալ ֆիզիկական ստեղծագործությունից: Նաև ուշադրություն դարձրե՛ք Հռոմ. 2:14-15-ին, որը հաստատում է մարդկանց մեջ ներքին բարոյական վկայության մասին:

❖ **«Երկինքները»** Նկատեք Սաղմ. 8:1, 50:6 և թե ինչպես են կապված Հռոմ. 1:19-20-ի աստվածաբանության հետ: Տե՛ս Հատուկ Թեմա. Երկինքներ:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓԱՌՔ (ՀԿ)
SPECIAL TOPIC: GLORY (OT)**

I. Հիմնական նշանակությունը՝

Գոյություն ունեն քսանից ավելի եբրայերեն բառեր, որոնք թարգմանվում են «փառք» (*doxa*) LXX-ի կողմից, սակայն ամենանշանակալի եբրայերեն տերմինը *kabod* է (BDB 458-459, KB, 455-458): Դրա հիմնական նշանակություն է «ծանր»: Այն առևտրի հետ կապ ունեցող տերմին էր և կիրառվում էր վաճառքի գործարքների ժամանակ (այսինքն՝ կշեռքները): Այն սկսեց ունենալ ավելի ընդարձակ ստուգաբանություն, որտեղ ծանր հասկացությունը կատարելագործվեց դառնալով կշիռ, մարդկային արժեքներ, վայրեր և առարկաներ:

II. ՅԱՀՎԵՅԻ համար կիրառությունը՝

Ա. Այն դարձավ ՅԱՀՎԵԻ անձնական ներկայությունը նկարագրելու միջոց: Այն համադրում է Նրա զորությունը, մեծափառությունը (այսինքն՝ գերբնականը) ֆիզիկական իրականության մեջ Իր անհատականության և ներկայության հետ (այսինքն՝ Իր էությունը):

Բ. Մատնանշում է ՅԱՀՎԵԻՆ արարչագործության մեջ, տես՝ Սաղմ. 19:1, 29:3,9, 104:31

Գ. Կիրառվում էր Իր ուխտի ժողովրդի ձևավորման հետ կապված աստվածաբանության համար: Նա է «Իսրայելի փառքը», տես՝ 1 Թագ. 15:29:

1. Եգիպտոսից ելլը /Ելիցը/, տես՝ Թվոց 14:22 (կանխասված Ծննդ. 15:12-21-ում)

2. փառքի հատուկ ամպի մեջ, որն առաջնորդում և ուղեկցում էր ժողովրդին, տես՝ Ելից 16:7,10

3. Սինա լեռան վրա Օրենքի տրվելը, տես՝ Ելից 24:16,17

4. Իր մատակարարումն ու դատաստանը անապատում դեզերելու տարիներին՝ ա. տասներկու լրտեսների հետ կապված առաջին ապստամբությունը, տես՝ Թվոց 14:9-10

բ. Մովսեսի բարեխոսությունը նրանց համար, տես՝ Թվոց 14:20-21

գ. Կորիսի ապստամբությունը, տես՝ Թվոց 16:19

դ. ջրի ճգնաժամը, տես՝ Թվոց 26:6

Դ. ՅԱՀՎԵԻն տեսնելու Մովսեսի խնդրանքը, տես՝ Ելից 33:18-23

Ե. Այն կիրառվում է հենց ՅԱՀՎԵԻ համար (այսինքն՝ Իր էության)

1. 1 Մնաց. 29:11

2. Սաղմ. 106:20, Երեմ. 2:11, Ովս. 4:7, Հռոմ. 1:23

3. Եսայի 42:8, 45:7, 48:11, 58:8, 60:1-2,19 (Հայտն. 21:23, 22:5)

4. Չաք. 2:5,10

Զ. Այն կիրառվում է ՅԱՀՎԵԻ ներկայության համար՝

1. Խորանում, տես՝ Ելից 16:7,10, 29:43, 40:34-34, Գևտ. 9:6,23

2. Տաճարում, տես՝ 3 Թագ. 8:11, 2 Մնաց. 5:14, 7:1-3, Ես. 6:3, Անգ. 2:3,9

3. Ուխտի Տապանակի վրա, տես՝ 1 Թագ. 4:22, Սաղմ. 63:2, 78:61

Է. Այն կիրառվում է ՅԱՀՎԵԻ թագավորության համար, տես՝ 1 Մնաց. 29:12-13, Սաղմ. 24:7-10, 45:3

Ը. Այն կիրառվում է ՅԱՀՎԵԻ բարոյական էության համար (այսինքն՝ արդարությունը), տես՝ Սաղմ. 29:3, 97:6, Ես. 42:8, 48:11, 58:8, Ամբ. 2:14

III. Մարդկանց և ազգերի համար կիրառությունը՝

Ա. մարդիկ

1. համագոր է «շնչին» (այսինքն՝ *nephesh*), տես՝ Ծննդ. 49:6, Սաղմ. 16:9, 108:1
2. հարստություն, տես՝ Ծննդ. 31:1, Սաղմ. 49:16,17, Ես. 10:3, 61:6, 66:11-12
3. պատիվ, տես՝ Ծննդ. 45:13, Սաղմ. 8:6, Անգ. 2:7
4. հեղինակություն, տես՝ Հոր 19:9, 29:20, Սաղմ. 4:2, 49:17
5. մեծափառություն, տես՝ 1 Մնաց. 29:12,28, 2 Մնաց. 17:5, 18:13, 32:27

Բ. ազգերը

1. Եգիպտոս,
2. Եփրեմ, տես՝ Ովս. 9:11
3. Սամարիա, տես՝ Ովս. 10:5

Գ. թագավորները

1. Ասվերոսը, տես՝ Եսթեր 1:4
2. Իսրայելը, տես՝ Սաղմ. 21:6
3. Անտիոքոս IV, տես՝ Դան. 11:39

Դ. ազգային բանակները՝

1. Ասորեստան, տես՝ Ես. 8:7
2. Իսրայել, տես՝ Ես. 17:4
3. Կեդար, տես՝ Ես. 21:16

- IV.** Կիրառվում է վերջին օրերի (Էսկատոլոգիա) նկարագրություններում՝
 Ա. ՅԱՀՎԵՆ վերադառնալու է Իր նոր տաճարը, տես՝ Եզեկ. 43:2,4,5, 44:4
 Բ. ՅԱՀՎԵՆ աշխարհը դեպի Իրեն է քաշելու, տես՝ Ես. 40:5, 59:19, 60:1-3, 66:18-19
 Գ. ՅԱՀՎԵՆ իջեցնելու է «նոր» Երուսաղեմը, տես՝ Ես. 66:10, Չաք. 12:7

- V.** Արարչագործության նպատակը ՅԱՀՎԵՒՆ փառավորելն է
 Ա. ստեղծված է Իր փառքի համար, տես՝ Ես. 43:7
 Բ. Նրան արժանի փառք, տես՝ 1 Մնաց. 16:29
 Գ. երգել, փառաբանել Նրա փառքը, տես՝ Սաղմ. 66:2, 96:8, 115:1
 Դ. ամեն ինչ, որ անում ենք, անում ենք Նրա փառքի համար, տես՝ 1 Մնաց. 10:31, 2 Կորնթ. 4:15, Եփ. 5:22, 6:5, 1 Պետ. 2:12

Ե. Westminster Shorter Catechism-ի առաջին հայտարարությունը:

NASB	«տարածություն»
NKJV, NRSV,	
LXX	«հաստատություն»
NRSV ծանոթագրություն	«երկնականար»
NJB, REB	«երկնքի շտեմարան»
JPSOA	«երկինք»

Այս տերմինը (BDB 956) կիրառվում է Ծննդ. 1:6,7 (երկու անգամ), 8,14,15,17-ում: Արտահայտում է երբայերենի մթնոլորտ հասկացությունը որպես հաստատուն երկնականար կամ ձգված մաշկ (այսինքն՝ վրան, տես՝ Սաղմ. 104:2, Եսայի 40:22): Երկնքի պատուհանները պետք է բացվեն, որպեսզի թույլ տան անձրևը թափվի:

Նկատելք, որ «երկինքներ» խոսքը առաջին տողում համագոր է երկրորդ տողի «հաստատություն» բառին:

❖ **«Նրա ձեռքերի գործերը»** Այս արտահայտությունը հաստատում է ՅԱՀՎԵՒՆ անձնական ներգրավվածությունը ստեղծագործության մեջ (տես՝ Ես. 48:13, 64:8): Այն հատկապես արտացոլում է Ծննդ. 2:7-ում (այսինքն՝ «շինեց» և ոչ թե խոսքով արարեց) Ադամի ստեղծման մեջ Նրա անձնապես

ներգրավված լինելը: ՆԿ-ից գիտենք, որ սա Հիսուսի աշխատությունն էր (տես՝ Հովհ. 1:3, 1 Կորնթ. 8:6, Կող. 1:16):

19:2-3 «օրը օրին» Ուշադրություն դարձրե՛ք թե՛ «օրվա» և թե՛ «գիշերվա» անձնավորումը: Հարցը նրանում է, որ ստեղծագործությունը, չնայած լռությամբ (տես՝ Սաղմ. 19:3), հայտնություն՝ պատգամ է հաղորդում Աստծո մասին (այսինքն՝ այս հասկացության տեղին ժամանակակից համահավասարը կլինի «Խելացի Դիզայն» շարժումը):

19:2 «հայտնում է» Այս ԲԱՅԸ (BDB 615, KB 665, *Hiphil* ԱՆԿԱՏԱԲ) ունի «փրփրացող աղբյուրի» հիմնական իմաստը (տես՝ Առակ. 18:4): Այն սկսել է կիրառվել փոխաբերական խոսքի համար՝
1. դրական իմաստով՝ Սաղմ. 19:2, 119:171, 145:7, Առակ. 1:23
2. բացասական իմաստով՝ Սաղմ. 59:7, 94:4, Առակ. 15:28

❖ **«գիշերը գիշերին գիտություն է ցույց տալիս»** Մարդկությունը միշտ հիացմունքով և երբեմն կռապաշտությամբ է նայել աստղագարդ երկնքին (տես՝ 3 Թագ. 23:5, Սաղմ. 8:1,3):

19:3 «Չկան խոսքեր» Սա վերաբերում է բնության լուռ, սակայն զորավոր վկայությանը:

19:4

NASB, NKJV	«սահման»
NRSV, JPSOA	«ձայն»
TEV, NJB,	
NRSV, REB	«ուղղերձ»
LXX, NASB	
լուսանցք	«ձայն»
NEB	«երաժշտություն»
Peshitta	«բառեր»

MT տալիս է ռոփ (BDB 876 II, KB 1081 րփ), որը «սահմանագիծ», «երաժշտական մեղեդի» իմաստն ունի (տես՝ NEB): UBS Տեքստային Նախագիծը գնահատում է «A»: Սակայն LXX և Ջերոմի տարբերակը տալիս են ռոփ (BDB 876, KB 1083 րփ), որը նշանակում է «խոսք», «բառ», «կանչ», որը կարծես թե ամենահարմարն է համատեքստին (նույն արմատը Սաղմ. 19:3-ում, այսինքն՝ «ձայն»): Վաղ եկեղեցին կիրառում էր (այսինքն՝ մեջբերում էր) LXX (Սեպտուագիտան):

❖ **«ամբողջ երկրում... մինչև աշխարհի ծայրը»** Սաղմոս 19:4-ի առաջին այս երկու տողերը հոմանիշ գուգահեռներ են: Աստվածաբանական շեշտադրությունը մարդկանց համար Աստված-հայտնության տիեզերական հասանելիությունն է (տես՝ Եսայի 42:10, 49:6, 62:11): Բոլորն են պատասխանատու Աստծո մասին իրենց ունեցած գիտության համար (Հռոմ. 1:18-3:18), տե՛ս՝ Հատուկ Թեմա. Հաշվետու լինելու տարիքը:

Բնական հայտնությունը (այսինքն՝ ֆիզիկական ստեղծագործության և ներքին բարոյական վկայության միջոցով) հանգեցնում է բոլոր մարդկանց կողմից հոգևոր պատասխանատվության գիտակցության (տես՝ Հռոմ. 1:18-3:18): Երբ անձը փրկվում է, այնուհետև բնական հայտնությունը դառնում է արարչագործության Աստծո հանդեպ զարմանքի, և երկրպագության միջոց (տես՝ Սաղմոս 8):

19:4գ-6 «արևը» Այս տեսարանում արևի գործածությունը գիտական նկարագրություն կամ առասպելաբանության պատմություն չէ, այլ բնորոշ է ՀԿ լեզվին, որը կիրառում է հանրահայտ պատկերավոր դարձվածքներ կապված բնության երևույթների հետ: Ուշադրություն դրանքին հետևյալ տեսարանին՝

1. արևն ունի վրան (այսինքն՝ բնակատեղի), Սաղմ. 19:4գ
2. արևը փեսա է՝ Սաղմ. 19:5ա

3. արևը վագում է իր վագրուղին՝ Սաղմ. 19:5բ (այսինքն՝ նկարագրված Սաղմ. 19:6): Ինչպես որ արևը լուսավորում է ամբողջ երկիրը, այնպես էլ, Աստծո բնավորության, գորության, գեղեցկության և ծրագրի հայտնությունը տիեզերական է (տես՝ Սաղմ. 19:4ա,բ): Յուրաքանչյուր մարդ գիտի Աստծո մասին ինչ-որ բան: Մյուս միակ տեղը, որտեղ աստվածաբանորեն կիրառված է «բնական հայտնությունը» մատնանշելու մարդու պատասխանատվությունը, Հռոմ. 1:18-3:18 է:

Պողոսը նաև հատուկ կիրառեց այս համարը Հռոմ. 10:18-ի համատեքստում այնպես, որ ցույց տա աշխարհի կարիքը Քրիստոսի մեջ Աստծո պատգամը լսելու՝ ընդունելու (այսինքն՝ ավետարանը): Պողոսի օրերի ռաբբիները հաճախ էին մի քանի մեջբերումներ միասին կատարում, որպեսզի արտահայտեն իրենց ցանկալի ուղերձը: Պողոսին այդպես էին ուսանել:

Սաղմոսերգուն հավանաբար ընտրել էր արևը որպես ՅԱՀՎԵԻ ծառա՝ քննադատելու ՀՄԱ-ում արևապաշտներին: Այս Սաղմոսը, ինչպես Ծննդոց 1-ը, ցույց է տալիս ՅԱՀՎԵԻՆ որպես արարիչ և երկնային մարմիններին վերահսկող (այսինքն՝ արևը, լուսինը, աստղերը, մոլորակները, համաստեղությունները, և այլն): Դրանք աստվածներ չեն կամ հրեշտակներ, որպեսզի վերահսկեն, կամ նույնիսկ ազդեն մարդկանց կյանքերի վրա:

NASB (ԹՎՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 19:7-14

⁷ՏԻՐՈՉ օրենքը կատարյալ է, վերափոխում է հոգին .

ՏԻՐՈՉ վկայությունը ճշմարիտ է, պարզամիտին իմաստուն է դարձնում:

⁸ՏԻՐՈՉ կանոններն ուղիղ են, սիրտ են ուրախացնում:

ՏԻՐՈՉ հրամանը մաքուր է, աչքերին լույս է տալիս:

⁹ՏԻՐՈՉ երկյուղը սուրբ է, հավիտյան է մնում:

ՏԻՐՈՉ դատաստանները ճշմարիտ ու միանգամայն արդար են:

¹⁰Դրանք ոսկուց, իրոք, շատ փորձված ոսկուց ավելի ցանկալի են,

Մեղրից ու մեղրախորսիսից ավելի քաղցր:

¹¹Քո ծառան դրանցով է խրատվում,

Ու դրանք պահելու վարձը շատ է:

¹²Ո՛վ կարող է գիտակցել *իր* սխալները .

Մաքրի՛ր ինձ ծածուկ մեղքերից,

¹³անձնապատան *մեղքերից* նույնպես պահպանի՛ր ծառայիդ,

Թող դրանք ինձ չտիրեն .

Այնժամ ես անարատ կլինեմ և անմեղ՝ մեծ օրինազանցությունից:

¹⁴Բերանիս խոսքերն ու սրտիս խորհրդածությունը

Թող Քո առաջ ընդունելի լինեն,

Ո՛վ ՏԵՐ, իմ գորությունն ու փրկիչ:

19:7 «ՏԵՐԸ» Սա Աստծո ուխտի անունն է՝ ՅԱՀՎԵ: Այն երբայերեն «լինել» ԲԱՅԻՑ է. տես՝ Ելից 3:14: Ռաբբիներն ասում են, որ այն վերաբերում է Աստծուն՝ Իսրայելի հետ Իր ունեցած ահտուկ ուխտի փոխհարաբերության շրջանակներում: Տե՛ս Հատուկ Թեմա. Աստվածության անունները:

❖ «կատարյալ» Տե՛ս՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՆՄԵՂ, ԱՆԱՐԱՏ, ԱՆՍԽԱԼԱԿԱՆ, ԱՌԱՆՑ ՆԱԽԱՏԻՆՔԻ:

19:7-9 «օրենք... վկայություն... կանոններ... հրաման... երկյուղ... դատաստաններ» Այս բառերը Աստծո գրի առնված հայտնության համար հոմանիշներ են: Տե՛ս՝ Հատուկ Թեմա. Աստծո հայտնության համար տերմիններ:

❖ **«կատարյալ... ճշմարիտ... ուղիղ... մաքուր... սուրբ... ճշմարիտ»** Սրանք Աստծո գրի առնված հայտնության բնութագրականներն են: Աստվածաշունչը Աստծո մասին միակ հստակ ինքնահայտնությունն է: Սա հավատքի կարևոր հաստատություն է: Այն սովորաբար կոչվում է «ներշնչանք» (տես՝ ստորև տրված Հատուկ Թեմա. Ներշնչանք): Եթե դուք հետաքրքրված եք այս հավատքի կանխանթադրության մասին իմ տված վկայությամբ, նայե՛ք Տեսանյութ. Ինչո՞ւ եմ ես վստահում ՆԿ-ին:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՆԵՐՇՆՉԱՆՔ
SPECIAL TOPIC: INSPIRATION

Սա հավատքի հաստատում է այն բանի, որ Աստված Իր Հոգու միջով ակտիվ կերպով ներգրավված է եղել մարդկության համար Իր գործերի, խոստումների և կամքի արձանագրության հարցում: Դա աստվածային էության ինքնաբացահայտումն է: Այս ինքնաբացահայտումը կազմում է «հայտնություն»: Ապագա սերունդների համար դրա արձանագրությունը կոչվում է «ներշնչանք»:

Աստվածաշնչում «ներշնչանք» բառի միակ կիրառությունը 2 Տիմ. 3:16-ում է և բառացիորեն ասվում է «Աստված արտաշնչեց»: Նկատել՝ որ «Սուրբ Գիրք» տերմինը ՆԿ-ում մշտապես նկատի ունի ՀԿ-ը (այսինքն՝ 2 Տիմ. 3:15 նկատի ունի Տիմոթեոսի հրեական դաստիարակությունը): Նկատել՝ որ Սուրբ Գրքի նպատակը երկակի է:

1. Իմաստություն, որը առաջնորդում է փրկության, 2 Տիմ. 3:16
2. արդարության մեջ մարզվել, 2 Տիմ. 3:16

Ուշադրություն դարձրե՛ք, թե ինչպես են Հովհ. 5:39, 1 Կորնթ. 15:3-4 և 1 Պետ. 1:10-12 դիտարկում ՀԿ-ը որպես Քրիստոսին մատնացույց անողի: Հիսուսն Ինքը հաստատում է այս մասին Դուկ. 24:25-27-ում (այսինքն՝ Էմմաուսի ճանապարհին երկու աշակերտները): Հոգին կատարելապես առաջնորդել է նաև ՀԿ-յան գրողներին (տես՝ 2 Պետ. 1:20-21): Եկեղեցին ընդունեց ժողովարանի կանոնը (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԿԱՆՈՆ): Նրանք դիտարկում են այն որպես ամբողջությամբ ներշնչված (տես՝ Մատթ. 5:17-19): Սակայն նրանք նաև գիտակցում էին, որ ՆԿ-ը, որը պարունակում է Հիսուսի խոսքերը և գործերը, վերջնական հայտնությունն էր (տես՝ Մատթ. 5:21-48, Եբր. 1:1-2): Հիսուսը ՅԱՀՎԵԻ կատարյալ, վերջնական և ավարտուն հայտնությունն է (տես՝ Հովհ. 1:1-5,14, Կող. 1:15-16): Նա է իրականացնում Մեսիայի մասին ՀԿ-յան խոստումը (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԵՍԻԱ, տես՝ Մատթ. 26:31,56, 14:27, 49, Դուկ. 20:17, Հովհ. 12:14-16, 13:18, 15:25, 17:12, 19:24-36, Գործք 1:16, 3:18,21-26, 4:25-28):

Նախքան մարդը կկարողանա հասկանալ, Սուրբ Հոգին պետք է բացի մարդու միտքը և սիրտը (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ, տես՝ Գործք 8:34-35, 13:27): Հոգին առաջնորդեց Սուրբ Գրքի գրողներին, որպեսզի Հիսուսի մեջ Աստծո ինքնաբացահայտող ճշմարտությունները արտահայտեն մարդկային բառերի, դարձվածքների և օրինակների միջոցով (տես՝ Հովհ. 14:26, 15:26-27, 1 Կորնթ. 2:10-11, 13-16):

Մի շատ հետաքրքիր հակիրճ քննարկում է առկա Միլլարդ Ջ. Էրիկսոնի *Քրիստոնեական Աստվածաբանություն*, 2րդ խմբագրություն, էջ՝ 224-245:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾԱՇՈՒՄՆԵՐԸ (իր յուրահատկությունն ու ներշնչանքը)

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾԱՇՈՒՄՆԵՐԸ (Բորի կանխատեսադրությունները)

19:7-11 «վերափոխում է... դարձնում է... ուրախացնում է... լույս է տալիս... մնում է... արդար... ավելի ցանկալի... քաղցր... խրատվում... պահելու» Ահա թե ինչեր է անում գրի առնված հայտնությունը մեր համար: Ո՛հ, Սուրբ Գրքի արժեքը ընկած մարդկության համար:

Ուշադրություն դարձրե՛ք երեքպատիկ գուգահեռներին .

	ՅԱՀՎԵԻ հայտնության համար անունները	ՅԱՀՎԵԻ հայտնության նկարագրությունը	ՅԱՀՎԵԻ հայտնության նպատակը կամ նկարագրությունը
Սաղմ. 19:7ա Սաղմ. 19:7բ	ՏԻՐՈՋ օրենքը ՏԻՐՈՋ վկայությունը	կատարյալ, անարատ են հաստատ են	նորոգում է հոգին պարզամիտին իմաստուն է դարձնում (տես՝ Սաղմ. 119:98-100)
Սաղմ. 19:8ա	ՏԻՐՈՋ կանոնները	ուղիղ են	ուրախացնում են սիրտը (տես՝ Սաղմ. 119:14)

Սաղմ. 19:8բ	ՏԻՐՈՋ պատվիրանները	մաքուր են	աչքերը լուսավորում են (տես՝ Սաղմ. 36:9, 119:130)
Սաղմ. 19:9ա Սաղմ. 19:9բ	ՏԻՐՈՋ երկյուղը ՏԻՐՈՋ դատաստանները	սուրբ է նշմարիտ են	հավիտյան է մնում բոլորովին արդար են (տես՝ 2 Օր. 32:4, Սաղմ. 119:138)
Սաղմ. 19:10ա	դրանք	ավելի ցանկալի են	ոսկուց, մաքուր ոսկուց (տես՝ Սաղմ. 119:72, 127)
Սաղմ. 19:10բ	դրանք	ավելի քաղցր	մեղրից, մեղրախորսիից (տես՝ Սաղմ. 119:103)
Սաղմ. 19:11ա Սաղմ. 19:11բ		Քո ծառան դրանք պահելու	խրատվում է վարձը մեծ է

Ինչպիսի՜ հզոր կրկնություն և զուգահեռականություն: Աստծո հայտնությունն փրկող է, տեղեկացնող, խրատող և իրական օրհնություն: Օ՛, փառք Աստծուն հայտնության համար:

19:8-9 «արդար» Երբայերեն արմատը սկզբնապես նշանակում էր «չափման եղեգ»: Սա խոսում է դատաստանի չափանիշի մասին: Աստված Ինքը այդ չափանիշն է: Տե՛ս Հատուկ Թեմա. Արդարություն:

19:9 «վախ» Այս ԻԳԱԿԱՆ ՍԵՌԻ ԳՈՅԱԿԱՆԸ (BDB 432, KB 433) նշանակում է «երկյուղով» կամ «ակնածանքով և հարգանքով»: Այս հասկացությունը հաճախ կիրառվում է Իմաստասիրական Գրքերում (տես՝ Հոբ 4:6, 6:14, 22:4, 28:28, Սաղմ. 5:7, 34:11, 90:11, 111:10, 119:38, Առակ. 1:7, 2:5, 8:13, 9:10, 10:27, 14:26-27, 14:26-27, 15:16, 16:6, 19:23, 22:4, 23:17): Պարբերաբար կրկնվող պատգամն այն է, որ ակնածանքը, հարգանքը, վախը, երկյուղը իմաստության սկիզբն է: Առանց Աստծո չկա նշմարտություն, պարզապես ընկած մարդկային կարծիքներ են և սովորույթներ (տես՝ Եսայի 29:13):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՎԱԽ (ՀԿ)
SPECIAL TOPIC: FEAR (OT)

I. Նշումներ Ծննդոց 22:12-ից՝
 Այս տերմինը (BDB 431, KB 432) հաճախ է ՀԿ-ում՝ երկու իմաստով: Այն կարող է նշանակել «վախ» (տես՝ Ծննդ. 3:10, 18:15, 20:8, 28:17, 32:7, 42:35, 43:18), սակայն որոշակի համատեքստերում այն փոխակերպվում է «երկյուղ», «հարգանք» կամ «պատիվ» նշանակության, երբ նկարագրվում է մարդու վերաբերմունքը Աստվածության հանդեպ: Ուշադրություն դարձրե՛ք հետևյալ տեքստերին՝ Ծննդ. 42:18, Ելից 1:17, 9:30, 18:21, Ղևտ. 19:14, 32, 25:17, 36, 43, 2 Օր. 6:2,24, 10:12,20, 14:23, 17:19, 25:18, 28:58, 31:12-13, Սաղմ. 33:8: Այս «վախը» պետք է հանգեցնի երկրպագության և հնազանդության (տես՝ Ելից 20:20, 2 Օր. 6:13,24, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊԱՀՇԵԼ): Սա փոխհարաբերության ապրելակերպ է, և ոչ թե մեկուսի դեպքերի, վայրերի, օրենքների կամ կանոնների մի շարք: Հնազանդությունը բխում է սիրուց և հարգանքից, ոչ թե հաշվեհարդարի վախից: Անհնազանդությունը հիմնականում դեմ է սիրույն, ինչպես նաև՝ օրենքին: Աստծո հետ մարդու փոխհարաբերությունը դառնում է կյանքի առաջնահերթությունը: Այն, որ «Աբրահամը հավատաց Աստծուն» (Ծննդ. 15:56) դրսևորվեց նրա կյանքում գործողություններով Ծննդոց 22-ում:

II. Նշումներ Երեմիա 1:8-ից
 ՅԱՀՎԵԻ կողմից ասված «մի՛ վախեցիր» խոսքը հաճախակի ուղղերձ է Իր ծառաներին՝

1. Աբրահամին՝ Ծննդ. 15:1
2. Իսահակին՝ Ծննդ. 26:24
3. Մովսեսին՝ Թվոց 21:34, 2 Օր. 3:2,22

4. Հեսուին՝ Հեսու 1:5-9, 8:1, 10:8
5. Գեդեոնին՝ Դատ. 6:8-10
6. Սողոմոնին՝ 1 Մնաց. 28:20
7. Եսայուն՝ Ես. 8:12-15
8. ազգային Իսրայելին՝ Ես. 41:10, 13,14, 43:1,5, 44:2, 54:4
9. Դանիելին՝ Դան. 10:12,19
10. Մարիամին՝ Ղուկ. 1:30
11. Սիմոնին՝ Ղուկ. 5:16
12. Պողոսին՝ Գործք 27:24
13. Հովհաննեսին՝ Հայտն. 1:17

III. Նշումներ Եսայի 41:10-ից

Սա շատ տարածված խոսք է ՅԱՀՎԵԻ կողմից ուղղված Իր ժողովրդին (տես՝ ես. 41:13, 14, 43:1,5, 44:2,8, 51:7,12, 54:4, 14): Ուշադրություն դարձրե՛ք, թե ինչու նրանք չպետք է վախենան:

1. ՅԱՀՎԵՆ անձամբ նրանց հետ է (այսինքն՝ Սաղմ. 23:4)
2. ՅԱՀՎԵՆ նրանց ուխտի Աստվածն է (այսինքն՝ Ծննդ. 15:1, Ելից 14:13, Դատ. 6:23, Ես. 41:10)
3. Նա նրանց գորացնելու է
4. Նա նրանց օգնելու է (Ես. 41:10,13)
5. նրանց հակառակորդները՝
 - ա. ամոթահար կլինեն
 - բ. կպատվազրկվեն
 - գ. կոչնչանան (Ես. 41:11-12)
 - դ. կկործանվեն

IV. **Հեսու 4:14 «ՏԵՐՆ ամբողջ Իսրայելի աչքի առաջ Հեսուին բարձրացրեց»** Այս ԲԱՅԸ (BDB 152, KB 178, *Piel* ՎԱՂԱԿԱՏԱՐ) կիրառվում է Հեսու 3:7-ում՝ մատնանշելով հենց այս գործը:

NASB, JPSOA	«ակնածեցին»
LXX, NKJV, Peshitta	«վախեցան»
NRSV	«երկյուղեցին»
TEV	«պատվեցին»
NJB	«հարգեցին»
REB	«մեծարեցին»

Սա Աստվածաշնչի լավագույն համարներից է, որտեղ կարող ենք տեսնել «վախ» (BDB 431, KB 432) խոսքի իմաստը: Այն կիրառված է «ակնածանք» կամ «հարգանք» իմաստով: Սա օգնում է մեզ հասկանալու, թե ինչ է նշանակում, երբ կարդում են, որ պետք է «վախենանք» Աստծուց:

Այս արտահայտությունը՝ «նրա կյանքի բոլոր օրերում վախենում էին Հեսուից, ինչպես որ Մովսեսից էին վախենում», մի փոքր չափազանցության պես է, երբ հիշում ենք Ելիցում և Թվոցում Մովսեսի առաջնորդության դեմ ժողովրդի ապստամբությունն ու տրտունջը:

❖ «մնում է հավիտյան» Այս նույն ճշմարտությունը արտահայտվում է Հիսուսի կողմից Մատթ. 5:18, 24:35, Մարկ. 13:31, Ղուկ. 21:33:

19:10 «դրանք ոսկուց էլ ավելի ցանկալի են... մեղրից» Արդյո՞ք սա նկարագրում է քո վերաբերմունքը Աստծո հայտնության հանդեպ: Արդյո՞ք քո ամենաթանկ իրը Աստվածաշունչը:

19:11 «Քո ծառան դրանցով է խրատվում» Աստված տվել է մեզ ուղեցույցներ այս կյանքի խաղաղության և ուրախության համար, սակայն դրանք պետք է կիրառվեն: Գոյություն ունի աստվածային ճանապարհ (տես՝ Սաղմ. 1:1-ի գրառումը) և մենք պետք է մնանք դրա մեջ (տես՝ Մատթ. 7:13-14):

19:12-13 Այս համարները աղոթք և գիտակցում է այն բանի, որ մեր անկում ապրած տգիտության և հիմարության մեջ Աստված արդյունավետ կերպով կաշխատի մեր ընկած էության հետ:

1. «Ո՛վ կարող է գիտակցել իր սխալները» (տես՝ Սաղմ. 40:12): Միայն Աստված գիտի մարդու սիրտը: Նա է դատելու (տես՝ Սաղմ. 139:23-24, 1 Կորնթ. 4:4-5, Եբր. 4:12-13):
2. «մաքրի՛ր ինձ ծածուկ մեղքերից»: Սա ՀՐԱՄԱՅԱԿԱՆ աղոթք է (BDB 667, KB 720, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ): Նկատի ունեցե՛ք, որ «ծածուկ մեղքերի» մասին է խոսքը, ոչ թե բացահայտ ապստամբության (տես՝ Ղևտ. Ղևտ. 4:2, 22,27; 5:15-18, 22:14):
3. «անձնապաստան մեղքերից նույնպես պահպանի՛ր»: Սա ևս մեկ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ աղոթք է (BDB 362, KB 359, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ): Սա բացահայտ ապստամբությունն է:
«Անձնապաստան» (BDB 267) ԱԾԿԱՆԱԸ Սաղմոս 119-ում (տես՝ Սաղմ. 119:21, 51, 69, 78, 85, 122) մի քանի անգամ կիրառվում է և թարգմանվում է «ամբարտավան», որը մատնացույց է անում ապստամբության վերաբերմունք: Այս համատեքստում այն վերաբերում է հայտնի մեղքերին:
4. «Թող դրանք ինձ չտիրեն»: Այս ԲԱՅԸ *Qal* ԱՆԿԱՏԱՐ է, սակայն կիրառվում է ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով:
Սա աղոթքի մեկ այլ տեսակ է: Մեղքը ծառային տիրողի պես է (տես՝ Հռոմ. 5:21, 6:9, 14, 17, 23):

Սաղմոս 19:13-ի վերջին երկու տողերը ներկայացնում են սաղմոսերգուի աղոթքի խնդրանքների պատասխանները՝

1. Ես անարատ կլինեմ
2. անմեղ կլինեմ մեծ օրինազանցությունից

Սաղմոսերգուն մեծ վստահություն ուներ ՅԱՀՎԵԻ կեղմից մեղքը՝ մեղքերը ներելու և մոռանալու ցանկության ու կարողության վրա (տես՝ Ես. 1:18, 38:17, 43:25, 44:22, Միքիա 7:19): Այս ներման մեխանիզմի մասին մենք միայն սովորում ենք ՆԿ-ում արձանագրված Հիսուս Քրիստոսի կյանքի, ուսմունքների, մահվան, հարության, Համբարձման և վերադարձի արձանագրության մեջ (այսինքն՝ ավետարանը): Ինչպես որ Սաղմոսները մեծարում են Աստծո գրի առնված հայտնության սրանչելիքները և մեծությունը, ՆԿ էլ հայտնում է Աստծո մարմնավորված հայտնության փառքը (այսինքն՝ Կենդանի Խոսքը): Հիսուսը Աստծո մեծագույն հայտնությունն է (տես՝ Հովհ. 1:1-14, Կող. 1:13-17, Եբր. 1:2-3):

19:14 Աստծո հայտնության և Նրա հրաշալի ներման գործության լույսի ներքո, սաղմոսերգուն շարունակում է իր աղոթքը՝

1. Թող իմ բերանի խոսքերը (մի ԲԱՅ, BDB 224, KB 243, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով, վերահսկում է #1,2,3)
2. Իմ սրտի խորհուրդները
3. «Ընդունելի» (BDB 953)
ա. Ղևտացիների գրքում տարածված խոսք կիրառվող գոհաբերության ժամանակ
բ. շատ տարածված խոսք է Իմաստասիրական Գրքերում՝
NIV թարգմանում է որպես՝
 - 1) հաճելի, հաչեցնել, հաճույք
 - 2) ընդունելի, ընդունված
 - 3) բարեհաճ, բարեհաճել
 - 4) համապատասխանել
 - 5) ուրախանալ

Եբր ճանաչում ենք Նրան և Նրանով փոխվում ենք, մենք ուզում ենք ապրել այնպես, որ հաճելի լինենք նրան: Այլոց Նրան բերելու մի միջոց: Ծշմարտապես ներված լինելու արդյունքը պետք է լինի

աստվածահանո փոխված և փոխող կյանքը (տես՝ Հռոմ. 8:28-30, 2 Կորնթ. 3:18, Գաղ. 4:19, Եփես. 1:4, 4:13, 1 Թեսաղ. 4:3, 5:23, 2 Թեսաղ. 2:13, Տիտոս 2:14, 1 Պետ. 1:15): Աստվածաշնչյան հավատքի նպատակը երկինքը չէ, երբ մենք մեռնենք, այլ Քրիստոսակերպությունը՝ հիմա:

❖ Մի քանի բնութագրական անուններ են փակում այս Սաղմոսը, ինչպես և սկսել էին (այսինքն՝ Սաղմ. 19:2):

1. ՅԱՀՎԵ (այսինքն՝ մշտագո, ամենուրեք ներկա, միակ Աստվածը)
2. Վեմը
3. Փրկիչը (*Qal ԴԵՐԲԱՅ*)

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓՐԿԱԳԻՆ/ՓՐԿԱԳՆԵԼ SPECIAL TOPIC: RANSOM/REDEEM

I. ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ

Ա. Հիմնականում երբայերենում կան երկու օրինական տերմիններ, որոնք փոխանցում են այս հասկացությունը:

1. *Ga'al* (BDB 145 I, KB 169 I), որը սովորաբար նշանակում է «վճարված գնի միջոցով ազատել»: *go'el* տերմինի մի ձևը հավելում է այս հասկացությանը անձնական միջնորդության նշանակություն, սովորաբար ընտանիքի անդամի կողմից (այսինքն՝ հարազատ՝ բարեկամ փրկագնող): Առարկաներ, կենդանիներ, հողատարածք կամ բարեկամներ (տես՝ Հռոմեոս 4:14, Եսայի 29:22) ետ գնելու իրավունքի մշակութային այս գործառույթը (տես՝ Ղևտացիների 25,27) աստվածաբանորեն փոխանցված է ՅԱՀՎԵի կողմից՝ Իսրայելին Եգիպտոսի ազատագրումից (տես՝ Ելից 6:6, 15:13, Սաղմ. 74:2, 77:15, Երեմ. 31:11): Նա դառնում է «Փրկիչը» (տես՝ Հոբ 19:25, Սաղմ. 19:14, 78:35, Առակ. 23:11, Եսայի 41:14, 43:14, 44:6,24, 47:4, 48:17, 49:7,26, 54:5,8, 59:20, 60:16, 63:16, Երեմ. 50:34):
2. *Padah* (BDB 804, KB 911), որը հիմնականում նշանակում է «ազատել» կամ «փրկել»:
 - ա. առաջնեկների ազատումը (Ելից 13:13-15 և Թվոց 18:15-17)
 - բ. ֆիզիկական ազատագրումը՝ հակադրված հոգևոր ազատագրման հետ (Սաղմ. 49:7, 8,15)
 - գ. ՅԱՀՎԵն փրկելու է Իսրայելին իրենց մեղքից և ապստամբությունից (Սաղմ. 130:7-8)

Բ. Աստվածաբանական հասկացությունը ներառում է մի քանի փոխկապակցված երևույթներ.

1. Առկա է կարիքը, կապանքը, զրկանքը, բանտարկությունը:
 - ա. ֆիզիկական
 - բ. սոցիալական
 - գ. հոգևոր (տես՝ Սաղմ. 130:8)
2. Ազատության, ազատ արձակման և վերականգնման համար պետք է գին վճարվի՝
 - ա. Իսրայել ազգի համար (տես՝ 2 Օր. 7:8)
 - բ. անհատի համար (տես՝ Հոբ 19:25-27, 33:28, Եսայի 53)
3. Ինչ-որ մեկը պետք է գործի որպես միջնորդ և օգնական: *ga'al* տերմինում այս մեկը սովորաբար ընտանիքի որևէ անդամ է կամ մտերիմ բարեկամ (այսինքն՝ *go'el*, BDB 145):
4. ՅԱՀՎԵն հաճախ Իրեն բնութագրում է ընտանեկան տերմիններով.
 - ա. Հայր
 - բ. Ամուսին

գ. Մտերիմ Բարեկամ Փրկիչ/ Վրեժխնդրության փրկագնումը ապահովվեց ՅԱՀՎԵԻ անձնական ներգրավվածությամբ, զինը վճարվեց և փրկությունը իրականություն դարձավ:

II. ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

Ա. Գոյություն ունեն մի քանի տերմիններ, որոնք փոխանցում են աստվածաբանական նշանակությունը:

1. *Agorazō* (տես՝ 1 Կորնթ. 6:20, 7:23, 2 Պետ. 2:1, Հայտն. 5:9, 14:3-4): Սա առևտրային տերմին է, որն արտահայտում է ինչ-որ բանի համար վճարված գին: Մենք արյամբ գնված ժողովուրդ ենք, և այլևս ինքներս մեր կյանքը չենք վերահսկում: Մենք պատկանում ենք Զրիստոսին:

2. *Exagorazō* (տես՝ Գաղ. 3:13, 4:5, Եփես. 5:16, Կող. 4:5): Սա նույնպես առևտրային տերմին է: Այն արտացոլում է մեզ համար Հիսուսի փոխանորդական մահը: Հիսուսը կրեց գործերով հիմնավորված օրենքի «անեծքը» (այսինքն՝ Մովսիսական Օրենքի, տես՝ Եփես. 2:14-16, Կող. 2:14), որոնք մեղավոր մարդիկ չկարողացան կատարել: Նա կրեց անեծքը (տես՝ 2 Օր. 21:23) մեր բոլորի համար (տես՝ Մարկ. 10:45, 2 Կորնթ. 5:21): Հիսուսով Աստծո արդարությունը և սերը հասնում են կատարյալ ներման, ընդունելության և մուտքի իրավունքի:

3. *Luō*, «ազատել»

ա. *Lutron*, «վճարված գին» (տես՝ Մատթ. 20:28, Մարկ. 10:45): Սրանք հզոր խոսքեր են, որ հնչել են Հիսուսի բերանից Իր գալստյան նպատակի մասին՝ աշխարհի Փրկիչը լինելու, վճարելով մեզի պարտքը, որն Իրենը չէր (տես՝ Հովհ. 1:29):

բ. *Lutroō*, «ազատ արձակել»

(1) Փրկել Իսրայելը, Ղուկաս 24:21

(2) Իր անձը տալ, որպեսզի ազատի և մաքրի մի ամբողջ ժողովրդի, Տիտոս 2:14

(3) Անմեղ փոխանորդ լինել, 1 Պետ. 1:18-19

գ. *Lutrōsis*, «փրկագնում», «ազատագրում» կամ «ազատություն տալ»

(1) Չաքարիայի մարգարեությունը Հիսուսի մասին, Ղուկաս 1:68

(2) Աննայի փառաբանությունն Աստծուն Հիսուսի համար, Ղուկաս 2:38

(3) Հիսուսի ավելի լավ և մեկ անգամ մատուցած զոհը, Եբր. 9:12

4. *Apolytrōsis*

ա. փրկություն Երկրորդ գալստյան ժամանակ (տես՝ Գործք 3:19-21)

(1) Ղուկաս 21:28

(2) Հռոմեացիների 8:23

(3) Եփեսացիների 1:14, 4:30

(4) Եբրայեցիների 9:15

բ. Փրկությունը Զրիստոսի մահվան մեջ

(1) Հռոմեացիների 3:24

(2) 1 Կորնթացիների 1:30

(3) Եփեսացիների 1:7

(4) Կողոսացիների 1:14

5. *Antilytron* (տես՝ 1 Տիմ. 2:6): Սա շատ կարևոր տեքստ է (ինչպես և Տիտոս 2:14), որը կապում է ազատագրումը խաչի վրա Հիսուսի փոխանորդական մահվան հետ: Նա է միակ և անկրկնելի ընդունելի զոհը, Մեկը, որ մահացավ «բոլորի» համար (տես՝ Հովհ. 1:29, 3:16-17, 4:42, 1 Տիմ. 2:4, 4:10, Տիտոս 2:11, 2 Պետ. 3:9, 1 Հովհ. 2:2, 4:14):

Բ. Աստվածաբանական հասկացությունը ՆԿ-ում:

1. Մարդկությունը գերի է դարձել մեղքին (տես՝ Հովհ. 8:34, Հռոմ. 3:10-18, 6:23):

2. Մարդկության մեղքի կապանքը բացահայտվեց ՀԿ-յան Մովսիսական Օրենքի (տես՝ Գաղատացիների 3) և Հիսուսի Լեռան Քարոզի միջոցով (տես՝ Մատթեոս 5-7): Մարդկային գործերը դարձան մահվան դատավճիռ (տես՝ Կող. 2:14):
3. Հիսուսը՝ Աստծո անմեղ Գառը, եկել է և մահացել մեր փոխարեն (տես՝ Մարկ . 10:45, Հովհ. 1:29, 2 Կորնթ. 5:21): Մենք գնվել ենք մեղքից, որպեսզի ծառայենք Աստծուն (տես՝ Հռոմեացիների 6):
4. ՅԱՀՎԵԻՆ և Հիսուսին նշելով որպես «մտերիմ բարեկամ», որոնք գործում են մեզ համար: Մա շարունակում է ընտանեկան տերմիններով ներկայացված փոխարենությունները (այսինքն՝ հայր, ամուսին, որդի, եղբայր, բարեկամ):
5. Փրկությունը՝ փրկագնումը, Մատանային վճարված գին չէր (այսինքն՝ Միջնադարյան աստվածաբանություն), այլ Քրիստոսի մեջ Աստծո խոսքի և Աստծո արդարության հաշտությունը Աստծո սիրո և կատարյալ հոգածության հետ: Իսայի վրա վերականգնվեց խաղաղությունը, մարդկության ապստամբությունը ներվեց, Աստծո պատկերը մարդկանց մեջ հիմա նորից լիարժեք գործում է մտերմիկ փոխհարաբերությամբ:
6. Մինչդեռ գոյություն ունի փրկության ապառնի տեսքը (տես՝ Հռոմ . 8:23, Եփես . 1:14, 4:30), որը ներառում է մեր հարուցյալ մարմինները և անձնական մտերմությունը Երրորդության Աստծո հետ (տես՝ Հատուկ Թեմա . Երրորդություն): Մեր հարուցյալ մարմինները լինելու են Նրա մարմնի պես (տես՝ 1 Հովհ. 3:2): Նա ուներ ֆիզիկական մարմին, սակայն հավելյալ տարածաչափական տեսքով: Դժվար է սահմանել 1 Կորնթ. 15:12-19-ի պարադոքսը 1 Կորնթ. 15:35-59-ի հետ: Ըստ երևույթին գոյություն ունի ֆիզիկական, երկրավոր մարմին և լինելու է երկնավոր, հոգևոր մարմին: Հիսուսը երկունս էլ ուներ:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Մա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ի՞նչ է «ընդհանուր հայտնությունը»: Ի՞նչ կարող է այն ձեզ պատմել Աստծո մասին:
2. Ի՞նչ է բովանդակում իր մեջ «հատուկ հայտնությունը»: Ի՞նչ կարող է այն պատմել ձեզ Աստծո մասին:
3. Ինչո՞ւ է այս Սաղմոսում Աստծո երկու տարբեր անուններ գործածվում:
4. Աստծո Օրենքի մեջ այս Սաղմոսի նկարագրածի պես արդյո՞ք դուք այդքան մեծ ուրախություն եք վայելում:
5. Թվարկե՛ք Օրենքի բնութագրականները:
6. Ի՞նչ պետք է ես անեմ ծածուկ մեղքերի հետ:
7. Որո՞նք են «անձնապաստան մեղքերը»: Ի՞նչն է այդքան լուրջ ՀԿ-ում այս մեղքերի հետ կապված:
8. Ի՞նչ նշանակություն ունի ձեզ համար Սաղմ . 19:14-ը: